

Գիտություն

ՄԱՅԻՍ

5




(246)

2012 թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ

Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՄԵՐ ՀԱՆԹԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՅԻՍԸ



Ճակատագրի բերումով մայիսը դարձավ մեր հաղթանակների, մեր ապրելու իրավունքի, մեր անանց հպարտության, բերկրանքի, մեր փառապանծ գոյամարտերի, հաղթելու կամքի առհավատյան:

Մեր մայիսյան համազգային սխրանքների սկիզբը 451-ին էր, Ավարայրի դաշտում, երբ իրար բախվեցին պարսկական 300 հազարանոց բանակը և 60 հազարանոց հայկական ուժերը: Մեր պատմության մեջ այն Վարդանանց պատերազմի օրն էր, մեր անկարելի սխրանքի, անհուսալի կռվի ու «Մահ իմացեալի» համազգային հաղթանակի օրը: Ասում են, որ Ավարայրի ճակատամարտից հետո, հայերին հավատուրաց լինելու պարտադրող պարսից Յազդերտ արքան ասել է՝ «Հայեր, կռվո՞ւմ եք, ապրեցե՞ք»: Ահա սրա համար է, որ մենք հպարտանում ենք՝ Ավարայրը համարելով մեր ժողովրդի, հայի բազկի հաղթանակի ճակատամարտ:

Մայիսյան մեր հաջորդ հաղթանակը 1918 թվականի մայիսին էր: Հայոց եղեռն իրագործած, հային հայրենիքից զրկած մարդակուլ օսմանը արշավեց իր հողի մի պատահիկ վրա ծվարած Հայաստան կոչվող երկրի վրա՝ իրագործելու իր մարդակուլ ծրագիրը՝ աշխարհի երեսից վերացնելու հայ ցեղն ու հայ անունը:

Ինչպես և 451-ին, թնամին հզոր էր ու բազմաքանակ: Իրար հետևից հեշտությամբ գրավելով հայկական քաղաքները՝ թուրքական խորշակը հասավ Սարդարապատ կայարան: Մինչև երևան մնում էր մի քանի ժամվա ճանապարհ: Ոչնչացման, անհետաց-

ման օրհասը կախվեց մեր թշվառ երկրի վերջին պատահիկի վրա:

Հայոց ոգու անկարելի նոր սխրանք-անձնագոհություն էր պետք՝ ազգովին չմոթվելու, ապրելու ու գոյատևելու համար: Հայաստան ու հայ ժողովուրդ և ամենակուլ, մինչև ատամները զինված թուրքական բանակներ: Ուժերն անհավասար էին, հույսը մեռնում էր: Սակայն, ինչպես և Ավարայրում, բռնկվեց հայ ժողովուրդը և հիշեց՝ «Հայեր, կռվո՞ւմ եք, ապրեցե՞ք»: «Մահ իմացեալի» ոգին էր թևածում Սարդարապատի, Ապարանի, Ղարաբաղի հայի ճակատներում: Կռվի էր ելել զենք բռնելու ընդունակ ամեն ոք: Եվ խորհրդանշական մի փաստ. Սարդարապատի ռազմաճակատի հրամանատար Դանիել Բեկ-Փիրումյանը ճերմակ ծիծի էր և կարմիր թիկնոցով, ինչպես Վարդան Մամիկոնյանը: Բոլոր ճակատներում հայերը պարտության մատնեցին թուրքական զերակշիռ ուժերին, որոնք խուճապահար փախուստի դիմեցին: Փառավոր հաղթանակ, որից չօգտվեցին Հայաստանի Ազգային խորհրդի ապիկարները:

...Եվ կրկին մայիս, երբ աշխարհին տիրելու նկրտումներով մի խեղագար, որ ֆաշիզմ էր խորհրդանշում, 1945-ի մայիսի 9-ին ծնկի եկավ հակահիտլերյան կռալիցիայի առջև: Մարդկության պատմության այդ ամենաարյունալի, ամենադաժան ու անմախաղեպ պատերազմի գլխավոր ծանրությունն ընկավ խորհրդային Միության ուսերին, երկիր, որի մի փոքրիկ և

հպարտ մասն էինք մենք՝ հայերս: Այո՛, Մեծ հայրենականը մահ հայի պատերազմն էր: Պատերազմ այն թշնամու դեմ, որ ակտիվ մեղսակիցն էր Հայոց մեծ եղեռնի, որի դաշնակիցն էր մեր դարավոր թշնամի թուրքը, և որի արյունարբու հրոսակները սահմանի վրա սպասում էին Ստալինգրադի անկմանը, որ մտնեին Հայաստան և ի վերջո իրականացնեին իրեն դարավոր ճիվաղային ծրագիրը՝ մորթեին, ոչնչացնեին վերջին հային:

Մեծ հայրենականը, այո՛, մեր պատերազմն էր: Այդ էր պատճառը, որ 600 հազար հայորդիներ՝ Հայաստանից, խորհրդային հանրապետություններից և Սփյուռքից կռվի էին ելել ֆաշիզմի դեմ և իրենց հերոսությամբ ծանրակշիռ ավանդ ունեցան մեծ հաղթանակի կերտման գործում: Փոքրաքանակ հայ ժողովուրդը տեսակարար կշռով ուներ ավելի շատ զորահրամանատարներ, զենքերակներ և հերոսներ, քան որևէ ուրիշ ժողովուրդ: 300 հազար հայորդիներ իրենց կյանքը դրեցին Մեծ հաղթանակի զոհասեղանին:

...2012 թվականի մայիսի 10-ին անկախ, ինքնիշխան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում տեղի ունեցավ զորահանդես՝ նվիրված Մեծ հայրենականում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակին, Հուլիի ազատագրմանը, Հայոց բանակի 20-ամյակին:

Ստեփանակերտի հրապարակով անցան Հայրենական պատերազմի վետերանները, > 2

➤ 1 Արցախյան ազատամարտում ծնված Հայոց բանակի զինվորները, սպաները: Նրանց շարքերում էին նաև Շուշի բերդաքաղաքն ազատագրած հերոսները: Շուշիի ազատագրումը դարձավ Արցախյան հերոսամարտի փառքն ու պսակը: Արցախյան գոտեմարտը՝ օրհասական պահին բռնկեցվելու, միասնական լինելու մեր զարմանալի շնորհն էր, որը ծնունդ էր առել Ավարայրում, շարունակվել Սարդարապատում, Մեծ հայրենականի ճակատներում և իհարկե՝ Արցախյան գոտեմարտում: Մենք կռվում էինք մեր դարավոր թշնամու դեմ, մենք վրեժ էինք լուծում նույն թուրքից, որը բնաջնջեց միլիոնավոր անմեղ մրդկանց: Եվ ես համոզված եմ՝ Ստամբուլում և Բաքվում մեր դարավոր թշնամին՝ հալածված բորենու կատաղությամբ և գազանային ատելությամբ դիտում էր մեր բանակի խրոխտ ու հպարտ երեք, և զորահանդեսի մասնակիցների դեմքին տեսնում հաղթողի կամքը և վճռականությունը: Այո, մենք, երբ պետք է՝ կռվում ենք, և վայ նրան, ով նոր ոճի կորոչա մեր ազատության, միակ հայրենիքի՝ հայի Հայաստանի դեմ:



Հայագիտության կարկառուն դեմքերից Մանուկ Աբեղյանի գիտական հսկայածավալ ժառանգությունն ամփոփված է ութ հատորում: Սակայն մեծարժեք մի շարք գործեր դուրս են մնացել դրանցից, այդ թվում՝ ժամանակի պարբերական մամուլում սփռված գեղարվեստական երկեր, մատենախոսություններ, թարգմանություններ, հրապարակախոսական հոդվածներ, նամակագրություն, որոնք անծանոթ են գիտական հանրությանը: Այս շարքում առանձնակի տեղ է գրավում Մ. Աբեղյանի հրապարակախոսական ժառանգությունը, որում արտացոլված են նրա հայրենասիրությունը, լավատեսությունը, հարազատ ժողովրդի իղծերն ու ակնկալիքները: Այս առումով աչքի է զարնում «Մանուկ Հայաստան» խոսուն վերնագրով հոդվածաշարը [«Ժողովրդի ծայն» (Թիֆլիս), 21, 28 սեպտեմբերի, 2 հոկտեմբերի 1918թ.]՝ նվիրված հայոց պետականության վերականգնմանը և այդ առնչությամբ ժամանակի մտավորականության պահվածքին:

Հաշվի առնելով վավերագրի ոչ միայն պատմական, այլև արդիական հնչեղությունը՝ հոդվածաշարի 1-ին և 2-րդ մասերը ներկայացնում ենք ընթերցողի ուշադրությանը:

Ամուշավան ԶԱԲԱՐՅԱՆ

«Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագրի տեղակալ, բանասիրական գիտությունների դոկտոր

Մանուկ ԱԲԵՂՅԱՆ

ՄԱՆՈՒԿ ՀԱՅԱՍՏԱՆԵՐ

Մանուկ Հայաստանը, մեր բանաստեղծների և ազգի երգած մանուկը, ծնվեց ոչ թե բուն ոգևորության շրջանում, այլ դժբախտաբար ճիշտ այն ժամանակ, երբ Կովկասի մայրաքաղաքում կուտակված մեր ինտելիգենցիան իր կատարյալ սնանկությունը ցույց տվավ:

Երբեք չի մոռացվի և չպիտի մոռացվի, թե ինչպես ժողովրդի այդ ուղեղը, սառնասրտությունը կորցրած, խուճապի էր ենթարկված մայիսի վերջերին և հունիսի սկզբներին, մինչև հասարակ զինվորները, սակավաթիվ սպաների առաջնորդությամբ, Սարդարապատում, Բաշ-Ապարանում և Փամբակի ձորում, կյանքի և մահվան վճռական կռիվն էին մղում թշնամու դեմ: Նա, այդ ինտելիգենցիան, Թիֆլիսում գլուխը կորցրած էր բառի իսկական նշանակությամբ. նա թողնում, լքում էր ամեն ինչ, և, վեհերոս ու վախկոտ, բռնում Վաղիկավազի ծանապարհը: Մարդիկ մի քանի ժամում որոշում էին և առանց որևէ դժվարության ոտքով գիշերով ծանապարհի էին ընկնում ամբոխի հետ, ու գնում:

- Ո՛ր եք գնում, ինչո՞ւ եք փախչում. մնացե՛ք, եղբայր, անգետ ամբոխին վատ օրինակ մի՛ լինե՛ք ...

- Դժվար է խորհուրդ տալ այժմ ուրիշներին, թե պե՞տք է փախչել, թե ոչ: Ամեն մարդ այժմ իր գլխի տերն է, ինքը գիտե: Միայն չպիտի մոռանալ, որ եթե գան, ամենից առաջ մեզ կհասնի: Նրանք մեր ցուցակները կունենան անպատճառ...

Այսպես էին պատասխանում նույնիսկ քաջասիրտ ազգային գործիչները, ազգի նահատակները, ու ծանապարհ էին ընկնում կամ պատրաստվում փախչելու, վախենալով, թե տաճիկները առաջուց նրանց ցուցակները պահած կունենան:

Բարեբախտաբար ամենըլ ոտով գնալ չէին կարող, ամենքն էլ ընտանիքից ազատ չէին, ամենքն էլ չէին կարող թողնել կին ու երեխա, ծերացած հայր ու մայր ու միայն իրենց գլուխն ազատելու վրա մտածել: Բարեբախտաբար կային և ավելի սառնասիրտները, իրենց դիրքից ամառողներ, որոնք իրենք մնացին և միայն իրենց կանանց ու երեխաներին ձգեցին սար ու ձոր, մտածելով, թե իրենք տղամարդ են, վերջին ռոպեին էլ կփախչեն:

Պատահում են փողոցում մեկին.

- Վա՛հ, դու այստե՛ղ ես: Հապա ես լսեցի, թե Վաղիկավազ ես թռել:

- Ո՛վ է ասում: Ես երբեք էլ չեմ մտածել այդ մասին, - ամոթից թաքցնում է մեր ինտելիգենտն իր փախստի մտադրությունը և խոստովանում է միայն այն ժամանակ, երբ ասում են, թե նա ո՛ւմ հետ ի՛նչ պատրաստություններ է տեսել

փախչելու համար:

Այժմ արդեն մեկ-մեկ գլխիկոր վերադառնում են փախչողները:

- Է՛հ, բարով ես եկել, փախչող եղբայր:

- Ես ամենևին էլ չեմ փախել, ես միայն գնացել էի այս ինչ տեղը հանգստանալու:

Ու դեռ ասում ու նեղանում ենք, թե ինչու Ջավախքի ժողովուրդն իր տեղում չմնաց, թե ինչու շիրակեցին իրեն ձգեց սար ու ձոր և կամ Սարդարապատի շրջանի հայերը թափվեցին Էջմիածին ու Երևան ... Եթե Թիֆլիսում նստող դասակարգ ու ազգային գործիչ երիտասարդներն այսպես էին, ի՞նչ պիտի աներ խեղճ ու կրակ գյուղացին:

Ու դեռ ասում ենք, թե ինչու Մանուկ Հայաստանը այդպես փոքր, շատ փոքր, այդպես հիվանդոտ մանուկ ծնվեց:

II

Երբեք ամիս առաջ տեղի ունեցած ամոթալի խուճապը Թիֆլիսում իրեն կարգին, դա մի արատ է, որ երկար կմնա ինտելիգենտի ճակատին. բայց արատը միայն այդ անասնական երկյուղը չէ, այլ ավելի այն, որ հենց այն ժամանակ, երբ ծնվեց Մանուկ Հայաստանը, ստեղծվեց նրա մասին մի այլաճակ մտածողության եղանակ, մտքի մի կործանարար տագնապ, որը մինչև այժմ դժբախտաբար չի վերանում:

Երբ հունիսի սկիզբներում հայտնի դարձան Բաթումի դաշնադրության պայմանները և թե ի՞նչ սահմաններով կազմվեց Հայաստանի Հասարակապետությունը, կարծես սառը ջուր մաղվեց մեր ազգասեր ինտելիգենցիայի գլխին: Փոխանակ ուրախ լինելու, որ ստեղծվում է դարերով երազած անկախությունը, անկախ Հայաստանը, թեպետ խիստ նեղ սահմաններով, և նրա գոյությունը ծանաչում է հենց այն թշնամին, որի դեմ այդ անկախության համար կռիվ էր մղել հայ ժողովուրդը դարեր շարունակ, - փոխանակ ուրախ լինելու, մեր խուճապի ենթակա ինտելիգենցիան ընկավ մի չտեսնված, չսկզբնավորված դրության մեջ: Նա պատրաստ էր նույնիսկ ձեռք բաշելու այդ Հայաստանին:

- Դա Հայաստան չէ՝ մտածե՛ք ամենից խորագետ ինտելիգենտը, որ կոչված էր ազգի փրկության գլուխ լինելու և նրա համար աշխատելու. և ահա ստեղծեց նա Արարատյան Հասարակապետությունը հորջորջումը, որ մինչև այժմ էլ սիրով գործ են ածում վրացիները: Բայց մեր թշնամին մեզինքն ավելի խելոք էր մտածել, նա Հայաստանի Հասարակապետության հետ էր դաշինք կապել: Նա Կովկասում Հայաստան էր ստեղծում:

- Ավելի լավ չի՞ լինիլ հրաժարվենք այդպիսի անկախությունից և միանանք Ադրբեջանի կամ Վրաստանի հետ, - ասում

էր մի ուրիշը, առանց մտածելու, որ մի օր առաջ այդ երեք երկիրները միացած էին և անկախ Հայաստան առաջ եկավ նրա համար, որ միացած դրության մեջ մնալն անհնարին դարձավ:

Կային նույնիսկ, այո՛, կային ասողներ, թե թող տաճիկներն այն փոքրիկ մասին էլ տիրեն:

Ինչի՞ համար էր մտքի այս այլաճակությունը: - Որովհետև Հայաստանը շատ փոքր երկիր է, աղքատ է, չի կարող կերակրել իր բնակիչներին, չի կարելի այնտեղ ծառայաբարկեստ զարգացնել. նա բուրդ չունի, բամբակ չունի... Մեկն ասում է, ի՞նչ պետություն, որ անտառներ չունի, մյուսը թե՛ ի՞նչ պետություն, որ հանքեր չունի: Մի երրորդը հարցնում է, թե՛ մի՞թե կարելի է այժմյան ժամանակում երևակայել մի տերություն, առանց ծովի, երեք-չորս տերության մեջ խեղդված. մի չորրորդը թե՛ ի՞նչ ֆինանսներ պիտի ունենա այդպիսի փոքր պետությունը. մի հինգերորդը թե՛ ինչի՞ պետք այդպիսի փոքր տերությունը, որ չի կարող նույնիսկ փող կտրել. մի՞թե առանց սեփական դրամի կարող է անկախ երկիր լինել. մի վեցերորդը, թե՛ երևանում նույնիսկ հարկավոր չենքերն էլ չկան ...

Եվ այսպես շատ բաներ էր ասում և դեռ ասում է մեր ինտելիգենտը և շատ պակասությունների համար պարսավում նորածին Մանուկ Հայաստանին:

Դժվար, շատ դժվար էր այդ խուճապի ենթակա ինտելիգենտներին հասկացնել, թե մի փոքրիկ պետության համար առժամանակ և երկար ժամանակ երևանի շենքերն էլ բավական են. թե աշխարհում եղել են և կան անկախ տերություններ, որ սեփական դրամ չունեն. թե իհարկե, փոքր տերությունը փոքր էլ ֆինանսներ կունենա և, անշուշտ, սկզբի շրջանում, բանի որ ամեն ինչ տակնուվրա է, ֆինանսական նեղություն կկրե. թե շատ լավ կլինե, որ Հայաստանը ծով էլ ունենար, բայց հայերը միշտ էլ ծով չեն ունեցել, բացի Կիլիկյան շրջանից. ուրեմն դրա համար պիտի հրաժարվե՞նք Հայաստանի անկախությունից. թե փոքրիկ Հայաստանը հարուստ է հանքերով, բայց դրանք անմշակ են. թե նա իրեն համար բավարար չափով անտառներ էլ ունի, բուրդ էլ, բամբակ էլ, պտուղ էլ, հաց էլ և ուրիշ շատ բարիքներ էլ: Եվ թե՛ եթե լավ մշակվի և բնության օժտած բոլոր բարիքներից լավ օգտվի, շատ ավելի մեծ թվով ժողովուրդ կկերակրի, քան այժմ: Թե ամենայն ինչ կախված է մեր աշխատանքից ու շնորհից: Եվ վերջապես փոքր է, աղքատ է, բայց մերն է, մեր սեփականը. չեղածից, ոչնչից լավ է:

Մի՞թե այսպիսի տարրական բաների համար օրերով, շաբաթներով ու ամիսներով խոսելն ու վիճելն և Հայաստանի փոքրության և աղքատության համար՝ նրանից հրաժարվելու այլաճակ միտքը ավելի ողբալի չէ՞ր և չէ՞ հայության համար, քան Վաղիկավազի ծանապարհը:

Այո՛, մեզ թողել են միայն մի փոքրիկ լեռնային երկիր, բայց մի՞թե պետք է մենք դրանից ձեռք բաշելու համար մտածենք, թե՛ պետք է իսկույն այդ լեռներին տիրանայինք և աշխատենք, որ եթե ոչ այսօր, վաղը, մյուս օր մնացած էլ ձեռք բերենք: Այո՛, մեր հարևան թուրքերն ու վրացիներն էլ՝ պահանջում են մեզանից ամբողջ գավառներ, բայց մի՞թե մենք դրա համար պիտի վիստեղանք, թե՛ պետք է ուժերս լարած կռվենք և կռվենք դրա դեմ և թույլ չտանք, որ անիրավություն այսքան մեծանա: Ճիշտ է, եթե մենք առաջ երկու տեղ, Տաճիկաստանում ու Ռուսաստանում ունեինք ցավեր հոգալու, հիմա ունենք չորս-հինգ տեղ. բայց դրա համար խելացնորության մեջ չպիտի ընկնենք:

Այո՛, այս և ուրիշ շատ ծանր պայմանները շատ են ճնշում, ընկճում մեզ. բայց մենք այժմ ունենք մի գոհար, որ դարեր շարունակ չենք ունեցել մեր տառապանքների մեջ: Դա երկնքի ցավերով ծնված Մանուկ Հայաստանն է, մեր և մեր հայրերի ու նախնիների իղձն ու աղոթքը, մեր հուսո աստղը, որ պիտի մեզ թևարկի և մեր ուժն ու աշխատանքի եռանդը բազմապատկի:

Այդ մանուկը դեռ փոքր է, տկար է, թուլակազմ, ենթակա հազար ու մի փորձանքի. բայց ամեն բան կախված է մեր շնորհից, խոհեմությունից ու ջանքից: Խնամք է միայն պետք նրա համար, և նա կմապրի, կգործանա ու կմեծանա:

Բայց արդյոք տանո՞ւմ ենք մենք այդ խնամքը, թե՛ մենք շարունակում ենք մտքի այլաճակ խուճապը:



ՀՀ ԳԱՄ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ ԳԱՄ սփյուռքի բաժինը

ՀՀ ԳԱՄ արտասահմանյան անդամ, մաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Իրանի Իսլամական Հանրապետության գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Մկրտիչ Թումանյանի ողջ կյանքը գիտության մշակի և հայ ժողովրդի նվիրյալ զավակի լավագույն օրինակ է:

Մկրտիչ Թումանյանը ծնվել է 1943 թ., Իրանի Սպահանի շրջանի Փերիա հայաշատ գավառում: Նրա հայրը՝ Մարկոս Թումանյանը, Հիզրան գյուղի գյուղապետն էր, որտեղ թեև ապրում էին քրիստոնյաներ, մահմեդականներ, բահայիներ, բայց նա տարիներ շարունակ հաջողությամբ կառավարել է այդ գյուղը: Մկրտիչ Թումանյանը նախնական կրթությունն ստացել է գյուղական դպրոցում՝ ուսանելով հոր մոտ, ով միաժամանակ աշխատում էր նաև գյուղական դպրոցում:

Այնուհետև, ութ տարեկանից հաճախել է Ջուղայի հայոց ազգային դպրոցը, ցուցաբերել է բարձր առաջադիմություն և ավարտել գերազանցությամբ: Հենց այս տարիներին էլ, ունենալով մաթեմատիկայի լավ ուսուցիչներ,



Բացի մանկավարժական և գիտական բնագավառներից, Մկրտիչ Թումանյանը մեծ ակտիվություն է ցուցաբերել նաև իրանահայ համայնքում: Նա եղել է թեմական և պատգամավորական խորհրդի անդամ: Գրեթե 40 տարի Մկրտիչ Թումանյանը Ատրպատականի հայոց թեմի պատգամավորական ժողովի ատենապետն էր: Ի դեպ, ի պատիվ նրա՝ կարողացել է զերծ մնալ ներհամայնքային կուսակցական խնդիրներից. նա անկուսակցական է: Նրա խոսքերով՝ իր կուսակցությունը իր ժողովուրդն է: Նա մոտ 30 տարի եղել է հայկական դպրոցի հոգաբարձուների խորհրդի նախագահը և ճիգ ու ջանք չի խնայել, որպեսզի թավրիզում պահի հայկական դպրոցը, անգամ այն պարագայում, երբ աշակերտների թիվը գնալով պակասում էր. իսկ համաձայն ԻԻՀ օրենքի՝ այդ կարգի դպրոցները ենթակա են փակման:

Թումանյանի ջանքերով, նրա հեղինակության և անձնական կապերի շնորհիվ թավրիզի հայկական դպրոցը պահպանվեց: Ատրպատականում աշխատելը կրկնակի դժվար է և բարդ, քանի որ այդ նահանգում մեծ է իրանական աղբյուրներից հեղինակության, բացի դպրոցներից, եղել են նաև հայկական եկեղեցիների, ինչպես նաև առաջնորդարանին պատկանող հողատարածքների պահպանման խնդիրները: Մկրտիչ Թումանյանի կյանքը ամենօրյա պայքար է հանուն հայապահպանության:

Միաժամանակ Մ. Թումանյանը համագործակցել է Հայաստանի մաթեմատիկոսների, հատկապես ԵՊՀ մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի աշխատակիցների հետ:

Նա պարբերաբար այցելում է Հայաստան, մասնակցում գիտակազմակերպչական միջոցառումներին և հանդես գալիս զեկուցումներով:

Հաշվի առնելով Մկրտիչ Թումանյանի գիտական և մանկավարժական մեծ վաստակը, ինչպես նաև մայր հայրենիքի հետ սերտ կապերը՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 2008 թվականին նրան ընտրել է ԳԱՄ արտասահմանյան անդամ:

2011 թ. Հայաստանի Հանրապետության անկախության 20-րդ տարեդարձի առթիվ, հայապահպանության գործում ներդրած ծանրակշիռ ավանդի, հայրենիքին մատուցած ծառայությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների միջև բարեկամության ամրապնդմանը մեծապես նպաստելու համար Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով Մկրտիչ Թումանյանը պարգևատրվեց Ամանիա Շիրակցու մեդալով:

Մկրտիչ Թումանյանը այսօր ևս մեծ ջանքեր է ներդնում հայապահպանության գործում և սերտորեն համագործակցում Հայաստանի գիտական հաստատությունների հետ:

Գոհար ԻՍԱԿՆՂԱՐՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱՄ սփյուռքի բաժնի գիտքարտուղար

Մկրտիչ ԹՈՒՄԱՆՅԱՆ



Մկրտիչ Թումանյանը վճռեց իր ողջ կյանքը կապել մաթեմատիկայի բարդ, բայց միաժամանակ հետաքրքիր աշխարհի հետ:

Թումանյանը ընդունվում է Թեհրանի համալսարանի մաթեմատիկայի բաժին և չորս տարի գերազանց սովորելուց հետո 1969 թ., մտնում է Թավրիզի համալսարան՝ աշխատելու որպես ուսուցիչ. հանգամանք, որը նրան ազատեց նաև զինվորական ծառայությունից:

Աշխատանքին զուգահեռ նա որոշեց շարունակել նաև կրթությունը: Մկրտիչ Թումանյանը ընդունվեց Թավրիզի համալսարանի մագիստրատուրա, որտեղ նրան դասա-

վանդում էին հնդիկ դասախոսներ, և նա ստիպված էր կատարելագործել անգլերենը:

Մագիստրատուրան ավարտելուց հետո՝ 1971թ., Մկրտիչ Թումանյանը արժանացավ համալսարանական դրամաշնորհի և մեկնեց Մեծ Բրիտանիա՝ խորանալու իր ընտրած մասնագիտության մեջ: Նա երեք տարի Սաութամթոն համալսարանում ուսանեց դիֆերենցիալ երկրաչափություն, և հենց այս ոլորտում էլ 1974թ. պաշտպանեց գիտական ատենախոսությունը՝ «Միմետրիկ տարածությունների հատկությունները» թեմայով:

Վերադառնալով Իրան՝ Մկրտիչ Թումանյանը աշխատանքի անցավ Թավրիզի համալսարանում՝ որպես դասախոս: Մանկավարժական գործունեությանը զուգահեռ Մկրտիչ Թումանյանը մեծ ակտիվություն

ցուցաբերեց համալսարանի վարչական գործունեության մեջ: Նա վեց տարի շարունակ գլխավորել է Մաթեմատիկայի բաժանմունքը, իսկ 1984-1988 թթ. եղել է Իրանի մաթեմատիկական միության նախագահը:

Մկրտիչ Թումանյանի ղեկավարությամբ պաշտպանվել են 65 մագիստրոսական և 10 թեկնածուական աշխատանքներ: Հեղինակ է մի շարք գիտական հոդվածների, մենագրությունների, անձնական նախաձեռնությամբ մաթեմատիկայի և երկրաչափության ոլորտի մի շարք աշխատանքներ անձամբ թարգմանել է անգլերենից, որպեսզի հասանելի լինի Իրանի մաթեմատիկայի բնագավառի ուսանողներին:

Փոխծովակալ Սերգեյ ԱՎԱԳՅԱՆՅԸ ՌԴ Խաղաղօվկիանոսյան Նավատորմի գլխավոր հրամանատար

Մայիսի սկզբներին Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդևի վերջին հրամանագրերից մեկով փոխծովակալ Սերգեյ Յուսեփի Ավագյանը նշանակվել է Խաղաղօվկիանոսյան նավատորմի հրամանատար: Նույն հրամանագրով Սերգեյ Ավագյանը ազատվել է շտաբի պետի՝ Խաղաղօվկիանոսյան նավատորմի հրամանատարի առաջին տեղակալի պաշտոնից: Այս մասին հաղորդել է Կրեմլի մամուլ ծառայությունը:

Ի դեպ, Սերգեյ Ավագյանը Խաղաղօվկիանոսյան նավատորմի հրամանատարի պարտականությունները կատարում էր 2010 թվականից, երբ նախկին հրամանատար Կոնստանտին Սիդենկոն նշանակվեց Արևելյան ռազմական օկրուգի զորքերի հրամանատար:

Սերգեյ Ավագյանը ծնվել է 1957 թվականին, Երևանում: Ավարտել է Նախիմովի անվան ռազմածովային բարձրագույն ուսումնարանը, Խորհրդային Միության ծովակալ Կուզնեցովի անվան ռազմածովային ակադեմիան և Գլխավոր շտաբի ռազմական ակադեմիան ավարտելուց հետո նա աշխատել է Սևծովյան նավատորմի Նովոռոսիյսկի ռազմածովային հենակայանի շտաբի պետ, ապա ծառայությունը շարունակել Խաղաղօվկիանոսյան նավատորմում՝ Պրիմորսկիի բազմասեռ զորքերի նավատորմի հրամանատար:



«Թալեսթ փաշայի թղթապանություն»՝ Տորոնտոյում

Արա Սարաֆյանի կազմած «Թալեսթ փաշայի թղթապանակը» աշխատությունը վերջերս ներկայացվեց Տորոնտոյում՝ Հայկական երիտասարդական կենտրոնի Համագային թատրոնում:

Հիշեցնենք, որ թուրքական արխիվների վերջերս գաղտնագրված փաստաթղթերը ու Թալեսթ փաշայի անձնական թղթերից մնացած նյութերը, աշխատության ապացուցմամբ, վկայում են, որ Թալեսթը «Հայոց ցեղասպանության ճարտարապետն էր»: Կան հստակ արձանագրություններ, որոնց համաձայն՝ հենց Թալեսթն է հրահանգել, ապա նաև վերահսկել Օսմանյան կայսրությունում հայերի տեղահանումը 1915-16-ին:

Թալեսթ փաշայի թղթապանակը օսմանյան պաշտոնական ամենահարազատ տեսակետն է, որ կա Հայոց ցեղասպանության մասին: Թղթապանակը հաստատապես իր ժամանակին պատրաստվել է ներքին գործերի նախարարի համար՝ մասնավոր օգտագործման նպատակով: Եվ այդ թղթապանակը մեր օրեր է հասել, քանի որ 1921-ին սպանվեց Թալեսթը, և նրա այրին թղթապանակը հանձնել է մի թուրք պատմաբանի, վերջինս էլ հրապարակել է:

(Սկիզբը՝ նախորդ համարում)
Շուտով հաճոցի «անգն մարտիկների» վիճակը դառնում է հուսահատական, քանի որ ֆրանսիական զինվորական ներկայացուցիչները վարում էին երկդիմի քաղաքականություն. թեպետ խոստացել էին ինքնապաշտպանության համար տրամադրել սննդամթերք, զենք ու զինամթերք, սակայն իրենց խոստումը ոչ միայն չեն հարգում, այլև թուրքերին տեղեկացնում են հայերի ինքնապաշտպանության կազմակերպման մասին:

Նի քարաշեն տները: Հարյուրավոր քաջարի մարտիկներ ընկնում են դիրքերում, հազարավոր հաճոցիներ անխնա կոտորվում են: Միայն 380 հոգու է հաջողվում կռվելով ճեղքել թշնամու պաշարման շղթան և դուրս գալ ահավոր շրջապատումից:

Երեք հարյուր հայ քաջերով, Բոլոր զինված մոսիններով, Դողան բեյին մենք ջարդ տալով, Հաճոց ինկավ՝ «Վրեժ» գոռալով: «Վրեժ» գոռալով ընկնում են նաև

կենտրոն Ադանան և հայերով բնակեցված Կիլիկիայի այլևայլ բնակավայրեր: Ֆրանսիական կառավարությունը, դրժելով իր դաշնակցային պարտավորությունները, 1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում կնքված պայմանագրով Կիլիկիան հանձնում է թուրքերին՝ կոտորածի վտանգի մատնելով Կիլիկիայի հայությանը: Իսկ արծվաբույն Ձեյթունը, որի 30.000 կայտառ ու շեն բնակիչներից միայն 1.058 էր Հայոց ցեղասպանությունից մազապուրծ վերադարձել ու հազիվ սկսել վերականգ-

փոքր հողատարածքի վրա, թեպետ Երևանի շրջակայքում սկսում են հիմնադրել իրենց պատմական հայրենիքի հիշատակները խորհրդանշող ավաններ ու թաղամասեր (Նոր Կիլիկիա, Նոր Արաբկիր, Նոր Ձեյթուն, Նոր Մարաշ, Նոր Հաճոց, Նոր Այնթապ, Նոր Մուսա լեռ, Նոր Եղեսիա (Ուրֆա) և այլն), սակայն երբեմնի ավերակված տան, հանգած օջախի մոմուռը շարունակում է մխալ նրանց հիշողության մեջ և զավթված Երկրի երազանքը հոգու կանչ դարձած՝ ժողովրդայնացած երգի տեսքով ավանդվում է սերնդից սերունդ:

Վերջինս ՍՎԱԶԼՅԱՆ. քանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող

ՀԱՃՈՑԻՆԵՐԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ



Ութամյա երկարատև ու համառ դիմադրությունից հետո թուրքերին հաջողվում է հրետանու խաչածև կրակոցների հեղեղով ավերել ու հրկիզել նաև Հաճոց-

ընդհատումներով երեք հարյուր տասնչորս օր հերոսաբար դիմադրած Այնթապը, հինավուրց քաղաքամայր Սիսը, պատմական անցյալ ունեցող Տարսոնը, առևտրի

նել ավերվածն ու հրկիզվածը, այդ զեյթունցիներից շատերը, ազգային հերոս Արամ Չոլաքյանի զխավորությամբ և նրա զինակիցներ Հովհաննես Սիմոնյանի, Էշխիա (հրոսակ) Կարապետի, Մանուկի և այլ կտրիճների հետ, միանում են Ամանուսի լեռներում ըմբոստացած հասանքեյցի (Ադանա) Ավետիսի հերոսների խմբին: Հետզհետե սովորացող, հինգ հարյուրի հասնող, այդ ու կին քաջերի այդ հսկա խումբը Տավրոսի անանցանելի լեռներում, զենքը ձեռքներին, գիշեր-ցերեկ կռվելով, ահ ու սարսափ են մատնում շրջակա թուրք գյուղերը և թեպետ հետապնդվում են ասկյարներից, սակայն, անասելի դժվարություններ հաղթահարելով, մինչև զինադադարը շարունակում են մարտնչել թուրքական զորքերի դեմ՝ հույս ունենալով փրկել իրենց նախնիների օրրան, երբեմնի շենշող Կիլիկիան:

Հետագայում արևմտահայերը, վերաբնակվելով իրենցից բռնագրավված պատմական Հայաստանից 10 անգամ

երբ որ բացվին դռներն հույսի, Եվ մենք Երկիր դառնանք կրկին, Չքնաղ Երկիր մեր Հայրենյաց, Որ բռնությամբ առին մեզսին:

Ցանկան տեսնել իմ Կիլիկիան. Օղը՝ մաքուր, ջուրը՝ զուլալ, Ցանկան տեսնել իմ Կիլիկիան. Վանքեր, բերդեր հոնտել շա՛տ կան:

Երբ որ լուծվի Հայոց Հարցը, Եվ մեզ տրվի նախնյաց հողը, Մենք կվարենք մեր արտերը, Կշենացնենք մեր գյուղերը:

Ցանկան տեսնել Սասուն ու Վան, Ձեյթուն, Հաճոց և Մուսա Դաղ, Տարսոն, Մարաշ, Սիս ու Այնթապ, Կծաղկացնենք մենք անպայման:

Թեպետ թուրքական կառավարությունը դաժանորեն ճնշում էր տարբեր վայրերում ծայր առած դիմադրողական-ինքնապաշտպանական հերոսամարտերը, սակայն իրենց մարդկային տարրական իրավունքների և ազգի ֆիզիկական գոյության համար մարտնչող անձնուրաց հայ հերոսները փայլուն հետք թողեցին հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ:

Ռուբեն Սևակի ճշմարիտ գնահատականը

Նորերս լույս է տեսել Հովհաննես Զիլինկիրյանի «Ռուբեն և սխալներն ազատության Սեակի հերոսական կյանքի և գաղափարական պատմությունը» աշխատությունը՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Պետրոսյանի խմբագրությամբ:

Հովհաննես Զիլինկիրյանն ապրում և ստեղծագործում է Ֆրանսիայի Նիս քաղաքում: Նա հայ նշանավոր բանաստեղծ, հայոց ցեղասպանության զոհ դարձած Ռուբեն Սևակի եղբորորդին է:

Գրքի առաջին էջից մինչև վերջին էջը Հ. Զիլինկիրյանը նորահայտ փաստերի հիման վրա բացահայտում է Ռուբեն Սևակի կյանքն ու գործունեությունը: Նա մեկ առ մեկ քննարկում է Ռուբեն Սևակի մասին տարբեր հեղինակների արտահայտած սուբյեկտիվ, իրականությունից շատ հեռու տեսակետները, բացահայտում է իսկական ճշմարտությունը՝ ընդգծելով այդ հեղինակների նպատակը՝ նսեմացնել նահատակ բանաստեղծի ունեցած դերը:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հետևյալ փաստը: Հանրահայտ է, որ 1915 թ. հայոց ցեղասպանության զոհ դարձան բազմաթիվ նշանավոր հայ մտավորականներ: Նրանցից ոչ մեկի մասին, բացի Ռուբեն Սևակից, երիտթուրքական իշխանությունները բացահայտորեն չեն արտահայտել իրենց վերաբերմունքը՝ ընդգծելով, որ «Ռուբեն Սևակը մահվան է դատապարտվել ժողովրդի մոտ ունեցած մեծ հեղինակության պատճառով»:

Իր նոր գրքում բերելով այս կարևոր

վկայությունը՝ Հ. Զիլինկիրյանն ընթերցողին ծանոթացնում է դեռևս 1917 թ. երիտթուրքերի կողմից թուրքերեն և ֆրանսերեն հրատարակված «BERCEUSE» գրքի: Այս գրքում թուրքերը հայկական կոտորածներն արդարացնելու համար, որպես «հայկական հեղափոխական գաղափարախոսության» ապացույց, բերում են միայն Ռուբեն Սևակի «Վերջին օրը» բանաստեղծությունը, որտեղ հայ մայրը իր որդուն կոչ է անում վրեժ լուծել գոհված հոր համար: Ահա այդ բանաստեղծության վերջին տողերը.

«Ահա կյանք... Հայաստանը մա՛յր բեզի: Կտակ կու տամ այս կոտորած սուրը երկսայրի,

Ուր հայրիկիդ դեռ տաք արիւնը կ'այրի... Օրոր ըսեմ քնանաս»:

Հ. Զիլինկիրյանի գրքին ծանոթացող յուրաքանչյուր ազնիվ մարդ կհամոզվի, որ Ռուբեն Սևակը եղել է այն եզակի հայրենասեր գործիչներից մեկը, որը չի ընկրկել երիտթուրքական պարագլուխների առջև, իր համար «թրքանալը նուաստանալ» է համարել և բարձր է պահել հա վատարմությունն իր ազգային ինքնությանը, մայրենի լեզվին:

Միաժամանակ Ռուբեն Սևակը իր ողբերգական մահով եղավ ընտանիքի սրբությանը նվիրվելու անձնագրի տիպար: Ռուբեն Սևակն այն հեռատես ու զգոն գործիչն էր, որ զգաստության կոչ էր անում բոլոր նրանց, ովքեր «գինովցած»



փարվել էին երիտթուրքերին և կուրորեն ծառայում էին նրանց շահերին: Այդ «գինովցածներին» Ռուբեն Սևակը զգուշացնում էր. «Ստոյգ կ'ըսեմ ձեզի, վտանգը մեծ է. շատ մեծ, ալելի մեծ, քան կրնանք ենթադրել»:

Հակառակ «գինովցածների» ստորաքարշության՝ Ռուբեն Սևակը կոչ էր անում հրաժարվել երիտթուրքերի հետ կապված պատրանքներից և մտածել ինքնապաշտպանության մասին: «Ժամանակ է հակազդելու, հակազդենք», - կոչ էր անում հայրենասեր Ռուբեն Սևակը և մատնացույց անում երիտթուրքերի կողմից սպառնացող վտանգը:

Անաչառ ընթերցողը նաև կհամոզվի, թե ինչ նպատակով են որոշ հեղինակներ շարունակաբար Ռուբեն Սևակին ներկայացրել (նաև այժմ) որպես սկսնակ բանաստեղծ, որը ավարտին չի հասցրել իր, որպես բանաստեղծի, ձևավորումը:

Ընթերցողը կհամոզվի. որ Ռուբեն

Սևակը չի ընտրել տրոբված ճանապարհ: Նա, ի տարբերություն իր շատ ժամանակակից նշանավոր գործիչների ու գրողների, ոչ միայն չկրկնեց ուրիշներին, այլև դրսևորեց իսկական հայրենասերին հատուկ կամք՝ ընդգծելով, որ վաղուց տրոբված ճանապարհը արևմտահայությանը տանում է դեպի երիտթուրքերի խարդախությամբ սարքած փակուղի:

Բայց, ավա՛ղ, երիտթուրքական խոստումներից «գինովցած» ու զխապտույտի մեջ ընկած շատ «խելոք» ու «շրջահայաց» գործիչներ, որոնք իրենց ձեռքն էին գցել հայ ժողովրդի գործերի տնօրինությունը, մնացին խուլ, կորցրին կողմնորոշվելու զգացողությունը:

Ճակատագրի բերումով Ռուբեն Սևակն այդ «գինովցած» գործիչների հետ միասին արժանացավ նույն ողբերգական վախճանին: Այո՛, մահը հավասարեցնում է բոլորին: Բայց ավելի լայն առումով մնում են պատասխանատվության չափն ու բաժինը, որոնք ժամանակի ու պատմության կամքով ընկնում են, թեև զոհի վիճակում, որոշակի մարդկանց վրա:

Միանգամայն արդարացի է Սփյուռքի նշանավոր ազգային-հասարակական գործիչ Անդրանիկ Շառուկյանի հետևյալ գնահատականը. «Եւ եթէ ինձի վիճակուէր, որ մեր նահատակ գրագէտներէն մէկուն յիշատակին [բոլորն ալ յարգելի են, բոլորն ալ հաւասար են] արձան մը կանգնենք, ինչպէս անժամօք գինուորի արձանները կան, մենք ալ մէկ արձան մը ընտրենք՝ հայ նահատակ մտաւորականները, հայ նահատակ գրագէտները, խորհրդանշող՝ ես պիտի ուզէի Ռուբեն Սեակին արձանը բարձրացնել, իբրեւ ամբողջական մարդ, իբրեւ ամբողջական գրագէտ և ամբողջական ազգային գործիչ»:



ԱՆԴԱՌՆԱԼԻ ԿՈՐՈՒՄՏ

Հայաստանի ֆիզիոլոգիական գիտությունը, ՀՀ ԳԱԱ Լևոն Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի կոլեկտիվը ծանր և անդամալի կորուստ կրե՝ վաղաժամ և չափազանց անսպասելի կյանքից հեռացավ տաղանդաշատ գիտնական, կենսաբանական գիտությունների դոկտոր Իրինա Բենիկի Մելիքսեյանը:

Իրինա Մելիքսեյանը դեռ վաթսուներեք տարեկան էր, որպես ԳԱԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտի նորաձևանակ տնօրեն մեծ և հեռահար ծրագրեր ուներ, որոնք, դժբախտաբար, անկատար մնացին. անողորմ մահը ընդհատեց նրա լուսավոր կյանքը, մեկը մյուսից հետաքրքիր մտախոհությունները, որոնք միտված էին շարունակելու և զարգացնելու հայկական ֆիզիոլոգիական դպրոցի փայլուն ավանդույթները:

Նշանակալի եղավ Իրինա Մելիքսեյանի գիտական վաստակը նյարդաձևաբանության և հյուսվածքաբանական հետազոտությունների բնագավառում: Նա

հասցրել էր հրատարակել 150-ից ավելի գիտական ուսումնասիրություններ, որոնք տպագրվել են հայերենական և միջազգային գիտական հանդեսներում:

Իրինա Մելիքսեյանին գիտական համբավ և միջազգային ճանաչում բերեց հյուսվածքաբանական հետազոտություններում նրա մշակած նորագույն մեթոդը, որը հնարավորություն տվեց հասնել նյարդային և հյուսվածքների ներազդյուն կառույցների հայտնաբերման լավագույն արդյունքի: Այդ մեթոդը այսօր կիրառվում է ոչ միայն հայ, այլև ուրիշ երկրների առաջավոր մասնագետների կողմից:

Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիական ինստիտուտի տնօրեն ընտրվելուց հետո լավագույնս դրսևորվեցին նրա սկզբունքայնությունը, մարդկային հրաշալի հատկությունները, գիտակազմակերպական անուրանալի շնորհքը: Նա լավ և հոգատար, միաժամանակ պահանջկոտ և սկզբունքային ղեկավար էր:

Իրինա Մելիքսեյանը ինստիտուտի տնօրեն էր, լաբորատորիայի վարիչ, Հայաստանի ֆիզիոլոգիական և մորֆոլոգիական ընկերությունների, ուղեղի հետազոտման միջազգային կազմակերպության և գիտական աստիճանների շնորհման մասնագիտական խորհրդի անդամ:

ՀՀ ԳԱԱ Լևոն Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի ողջ կոլեկտիվը խորապես վշտացած է սիրելի տնօրենի, ընկերոջ, նրբագգաց և հրաշալի գիտնականի՝ Իրինա Մելիքսեյանի մահվան կապակցությամբ և սրտանց ցավակցում է նրա հարազատներին ու մտերիներին: Նրա լուսավոր հիշատակը միշտ վառ կմնա մեր սրտերում:

ՀՀ ԳԱԱ Լ. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ

ՀՐԱՆՏ ՌՈՒԲԵՆԻ ՊՈՂՈՍՅԱՆ



Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը և Հայագիտության ու հասարակական գիտությունների բաժանմունքը խորապես ցավում են Ռուսաստանում «Հայաստան» բարեգործական հիմնադրամի գլխավոր տնօրեն, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Ռուբենի Պողոսյանի մահվան կապակցությամբ:

Հրանտ Պողոսյանը տնտեսագիտության բնագավառի նշանավոր ներկայացուցիչ, բարերար և մեծ հայասեր է: Նա հեղինակ է յոթ տասնյակից ավելի գիտական աշխատությունների, ուսումնական ձեռնարկների և մենագրությունների: 2012 թ. պատրաստում էր տպագրության «Ռուսաստանի նշանավոր հայերը» գիրքը:

Գիտամանկավարժական աշխա-

տանքին և բարեգործությանը զուգահեռ, Հրանտ Պողոսյանը զբաղեցրել է պետական կառավարման համակարգում տարբեր ղեկավար պաշտոններ:

2007 թ. նա հիմնադրել է «Հայաստանի Հանրապետության գիտության, կրթության և առողջապահության զարգացման» բարեգործական հիմնադրամը, 2011 թ. Ռուսաստանում հիմնադրել և ղեկավարում էր «Հայաստան» բարեգործական ընկերությունը: Այդ բարեգործական ընկերության շրջանակներում Հրանտ Պողոսյանը ակտիվորեն աջակցում էր ինչպես Ռուսաստանի շատ հայերի, այնպես էլ Հայաստանի գիտնականներին: Հիմնադրամի գլխավոր նպատակն էր ֆինանսական հատկացումներ ցուցաբերել՝ ուղղված Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գիտության, կրթության և մշակույթի զարգացմանը, ինչպես նաև սոցիալական միջազգային կարևոր խնդիրների լուծմանը: Միայն վերջերս նրա աջակցությամբ մրցանակներ էին տրվել Հայաստանի երիտասարդ լավագույն գիտնականներին:

Մեր անկեղծ ցավակցությունն ենք հայտնում Հրանտ Պողոսյանի ընտանիքին և նրա հարազատներին:

ՀՀ ԳԱԱ նախագահությունը
ՀՀ ԳԱԱ հայագիտության և
հասարակական
գիտությունների բաժանմունք

(Սկիզբը նախորդ համարում)

Բացառված չէ նաև, որ ջերմության բարձրացման հետևանքով բնեղանի շրջաններում պայմաններ ստեղծվեն գյուղատնտեսության զարգացման համար, իսկ տեղումների հավասարաչափ բաշխումը զգալիորեն կկրճատի անապատների մակերեսը:

Դժվար է ճշտորեն նկարագրել այն սցենարները, որոնք կդրսևորվեն երկրի ջերմաստիճանի բարձրացման հետևանքով: Սակայն այսօր արդեն տեսնում ենք դրա աղետալի հետևանքները աշխարհի տարբեր տարածաշրջաններում: Նկարագրված փոփոխությունների հետևանքով կծագեն անկանխատեսելի տնտեսական և ժողովրդագրական պրոբլեմներ: Եթե մարդը այդ պայմաններում հսկայական և անխուսափելի կորուստների գնով կարող է հարմարվել ստեղծված իրավիճակին, ապա դա չեն կարող անել կենդանիները, բույսերի տեսակների ու պոպուլյացիաների ճնշող մեծամասնությունը: Դա հարցականի տակ կդնի կենսոլորտի

զանրության վրա: Դրա հետ կապված ներկայումս կարևոր խնդիրներ են դրվում Հայաստանում անտառների ու Սևանա լճի պահպանման, ինչպես նաև հողերի էրոզիան կանխելու համար:

Սևանի ավազանի կլիմայի ձևավորման վրա մեծ ազդեցություն ունեն ծովի մակերևույթից ունեցած բարձրությունը, ջրային խոշոր ավազաններից և անտառային զանգվածներից ունեցած հեռավորությունը, արեգակնային ճառագայթման ինտենսիվությունը և այլ գործոններ: Կլիմայի սպասվող փոփոխությունները, ինչպես ամբողջ հանրապետությունում, այնպես էլ Սևանի ավազանում, կարագացնեն անապատային երևույթները, կկրճատվեն ջրային պաշարները, կփոփոխվեն մշակելի տարածքների սահմանները: Նման սցենարի դեպքում կինտենսիվանան հողից ջրի գոլորշիացումը և ջրազրկումը: Դա հատկապես նկատելի կլինի չոռգվող տարածքներում, որտեղ բույսերի ջրի անհրաժեշտ քանակը ապահովվում է միայն տեղումներով: Ստեղծված պայմաններում հատկապես արդիական են դառնում վարե-

կունության բարձրացումը դրանց անհատական զարգացման ընթացքում, կիրառելով այնպիսի միջոցներ, որոնք կնպաստեն դրանց քսերոմորֆ կառուցվածքի ձևավորմանը:

Երկրագնդի ջերմացման հետևանքով ձևավորված պայմաններում հարկավոր է վերանայել հողի մշակման գոյություն ունեցող համակարգը: Պետք է մշակել և կիրառել ագրոտեխնիկական այնպիսի եղանակներ, որոնք կմեծացնեն հող մտնող ջրի քանակը և հատկապես հողաշերտերում դրա պահպանումը: Կարևոր է նաև համապատասխան մշակաբույսերի սերմերի ցանքի ճիշտ խորության և խտության ապահովումը: Խոշոր հատիկներով սերմերի խորը և մոտ ցանքի դեպքում օփակված հանգույցը ձևավորվում է հողի խորը շերտերում, որտեղ խոնավության աստիճանն ավելի բարձր է: Ոչ քիչ կարևոր նշանակություն կունենա անջրդի հողատարածությունների վրա ձյան կուտակումը, հողի հետ ոչ մետաղական հանքատեսակների՝ ցելիտների, պեղիտների խառնումը, որոնք խոնավությունը կլանելու և բույսերին մատակարարելու հատկություն ունեն: Բույսերի չորադիմացկունության բարձրացման մեջ նշանակալի է նաև հողի կանոնավոր պարարտացման և սերմերի նախացանքային մշակման, ինչպես նաև ռոտացիոն ժամկետների ու եղանակների ճիշտ ընտրությունը ու օգտագործումը:

Երկրի ջերմացման աղետալի հետևանքները մեղմելու ինչ հնարավոր եղանակներ կարող են լինել: Նախ և առաջ պետք է կտրուկ նվազեցնել մթնոլորտում օրեցօր աճող ածխաթթու գազի քանակները՝ կրճատելով օրգանական վառելիքի այրման ծավալները, ստեղծելով էկոլոգիապես անվտանգ էներգակիրներ: Այդ հարցի լուծումը առաջին գնումն է տեխնիկական փնտրտուքի մակարդակում: Երկրորդ ուղին անտառների և կանաչ մակերեսների մեծացումն է, որի շնորհիվ կաճեն բույսերի կողմից կատարվող ֆոտոսինթեզի ինտենսիվությունը և CO₂-ի կլանման ծավալները: Կարևոր է նաև համաշխարհային օվկիանոսի դերը: Ջրի աղտոտումը զգալիորեն ճնշում է ֆիտոպլանկտոնի կողմից կատարվող ֆոտոսինթեզի ինտենսիվությունը և թթվածին արտազատումը, նեխման և փտման պրոցեսների հետևանքով մեծ քանակությամբ CO₂ է արտադրվում:

Ինչպես տեսնում ենք երկրի ջերմային հաշվեկշիռի տեղաշարժերի հետևանքով կլիման գլոբալ փոփոխությունների կարող է ենթարկվել, որը իդի է աղետալի հետևանքներով: Նման վիճակի կանխումը, երկրի ջերմային հաշվեկշիռի պահպանումը, պատասխանատվությունը մթնոլորտում CO₂-ի կուտակումների նկատմամբ և դրանց անհապաղ կրճատման անհրաժեշտությունը, բնական և գյուղատնտեսական էկոհամակարգերում կենսաբազմազանության պահպանման ուղղությամբ համապատասխան գիտական միջոցառումների մշակումը, դարձել են անհետաձգելի խնդիր և մեր մոլորակի վրա մարդկության հուսալի ապագայի հրամայական պայման:

Արմեն ՄԻՄՆՅԱՆ
Կենսաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ՄԵՐ ՄՈՒՈՐԱԿԻ ԶԵՐՄԱՅՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՈՂՈՒՄԱՐԳԵՐԻ ՎՐԱ

պահպանումը այսօրվա տեսքով և կհանգեցնի կենսաբազմազանության զգալի կորստի: Երկրագնդի տարեկան միջին ջերմաստիճանի բարձրացումը 2-3°C-ով և մթնոլորտային տեղումների կրճատումը կհանգեցնի նաև լուրջ փոփոխությունների բնական ու գյուղատնտեսական էկոհամակարգերում:

Երկրի կլիմայի փոփոխությունների հետևանքով ինչ սցենարներ են կանխատեսվում մեր հանրապետությունում: Ներկայումս մեր հանրապետությունում անապատ-կիսաանապատային գոտին գտնվում է ծովի մակերևույթից 400-1250մ բարձրության վրա և կազմում է 4550 կմ², որը հիմնականում բնակեցված է քսերոֆիտ բույսերի կենսաջենոթներով: Ջերմաստիճանի բարձրացումը 2-3°C-ով և տեղումների քանակի կրճատումը 10-15%-ով կհանգեցնի այդ գոտու ընդարձակմանը և այն կհասնի 6500 կմ²: Ընդ որում Արարատյան հարթավայրում այն կկազմի 1400 կմ²: Նկարագրված սցենարի դեպքում կանհետանան բուսական և կենդանական շատ համակեցություններ: Կչորանան ջրային մի շարք ավազաններ և կվերածվեն աղուտների: Ջերմային ռեժիմի տեղաշարժերի հետևանքով էական փոփոխություններ կկրեն նաև Հայաստանի անտառները. զգալիորեն կկրճատվեն դրանց տարածքները և անտառային էկոհամակարգերը: Դրա հետևանքով զգալիորեն կփոխվեն շատ թռչնատեսակների բնակության վայրերը: Հատկապես կործանարար կլինի Արաքս գետի հովտի ջրային տարածությունների չորացումը, որտեղ բնադրում են շատ թռչնատեսակներ:

Կլիմայական փոփոխություններն իրենց ազդեցությունը կունենան նաև մեր հանրապետության նախալեռնային և լեռնային, այդ թվում նաև Սևանի ավազանի կենսաբազմա-

լահողների խոնավապահպանական միջոցառումների կիրառությունը և բույսերի չորադիմացկուն սորտերի մշակության ընդլայնումը: Մշակության համար պետք է ընտրել այնպիսի սորտեր, որոնք իրենց գենետիկական առանձնահատկություններով և հողի ու մթնոլորտի չորության դեպքում կարող են նորմալ բերք ապահովել: Այդ ուղղությամբ հեռանկարային պետք է համարել սելեկցիոն աշխատանքները, որոնք կատարվում են ներկայումս տարբեր շրջաններում շրջանառված ցորենի սորտերի և Հայաստանում, հատկապես, «Էրեբունի» արգելոցում աճող ցորենի վայրի տեսակների միջև հիբրիդացման և սելեկցիոն սորտեր ստանալու ուղղությամբ:

Հացահատիկի արտադրության խնդիրը մեր սակավահող հանրապետության և, հատկապես, Սևանի ավազանի տարածաշրջանի համար խիստ կարևոր է: Քանի որ հացահատիկի ցանքերի ընդարձակումը հնարավոր չէ, այդ պատճառով հացի արտադրության հիմնական ծանապարհը մնում է հասկաբույսերի բերքատվության բարձրացումը: Սևանի ավազանում հացահատիկային մշակաբույսեր ցանվում են բոլոր շրջաններում՝ ծովի մակերևույթից մինչև 2400 մ բարձրության վրա: Դրանք զբաղեցնում են ամբողջ ցանքատարածությունների մոտ 30-35 %-ը:

Կլիմայի համամոլորակային տաքացման բացասական ներգործությունից զերծ մնալու համար հարկավոր է վերականգնել չգործող սորտափորձադաշտային և սերմնաբուծական տնտեսությունների գործունեությունը: Հայ սելեկցիոնների կողմից ստացված ցորենի չորադիմացկուն և ցրտադիմացկուն սորտերը պետք է կրկին ենթարկվեն փորձարկման և շրջանացման: Կարևոր է բույսերի չորադիմաց-



ԱՌԴՆ ԲԱԲԱԶԱՆՅԱՆ -90

ԽԱՅՄ Ժողովրդական արտիստ, ԽԱՅՄ և ՀԽՍՀ պետական մրցանակների դափնեկիր, ականավոր կոմպոզիտոր և տաղանդավոր դաշնակահար Առո Յարուբյունի Բաբաջանյանի (1921-1983) ծննդյան 90-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շարքում 2012թ. մայիսի 17-ին ՀՀ ԳԱԱ Նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ գիտաժողով, որի աշխատանքների ընթացքում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի և Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական իսմայլսարանի գիտնականների ղեկուցումներում ներկայացվեց կոմպոզիտորի բազմաժանր ստեղծագործությունը:

Բացման խոսքում ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության ղոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը նշեց, որ Ա.Բաբաջանյանը հայ կոմպոզիտորական հզոր բանակի այն սակավաթիվ ներկայացուցիչներից է, ում ստեղծագործական և կատարողական գործունեությունը դեռևս կենդանության օրոք արժանացել է երաժշտագետների սկեռուն ուշադրությանը: Թեև հրատարակված մենագրությունների և հոդվածների շնորհիվ հայ (և ոչ միայն հայ) երաժշտագիտության մեջ վաղուց արդեն ձևավորվել ու բեղմնավոր ճանապարհի է անցել բաբաջանյանագիտությունը, սակայն այսօր էլ հետաքրքրությունը չի սպառվել և չի սպառվի հետազոյում ևս: Կարևորելով Ա.Բաբաջանյանի տղեն ու դերը 20-րդ դարի հայ և սովետական երաժշտական մշա-

կույթի անդամատանում, նա զոհուճակությամբ նկատեց, որ նստաշրջանի աշխատանքներին մասնակցում են ինչպես փորձառու, այնպես էլ երիտասարդ մասնագետներ՝ գիտակրթական տարբեր օջախներից:

Այնուհետև հրապարակվեց հԱՅՄ ժողովրդական արտիստ, Ա.Բաբաջանյանի մտերիմ բարեկամ էղվարդ Միրզոյանի՝ նստաշրջանին հատուկ հղված ողջույնի ջերմ ու սրտառու խոսքը, որտեղ մասնավորապես նշված էր. «Սրտանց ուրախ եմ և հիացած իմ սիրելի Առնոյին նվիրված նախաձեռնության համար: Ցավում եմ, որ ներկա չեմ կարող լինել: Շատ կուզեի մասնակցել և խոսել նրա ստեղծագործության, արտակարգ տաղանդի և մեր մտերմության մասին»:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ և ՀԽՍՀ պետական մրցանակների դափնեկիր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ Հովհաննես Չեփջյանը և պատմեց հետաքրքիր զրկագներ իրենց հանդիպումների:

Ապա ողջույնի խոսքով հանդես եկան Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ռեկտոր, պրոֆեսոր Հախեն Հախիսյանը և Ա.Բարաջանյանի հիշատակի միջազգային հիմնադրամի տնօրեն, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Ժակ Հակոբյանը:

Գիտատեղիվում առաջինը հանդես եկավ 77 ՊԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր Աննա Ասատրյանը՝ «Ա. Բաբաջանյանի

երգերը» թեմայով զեկուցումով: Ընդգծելով այն հանգա-
մանը, որ Ա.Բաբաջանյանի երգերը բացառիկ երևույթ
էին հայ և սովետական երաժշտության մեջ, դրանցից շա-
տերը ստեղծման օրից դառնում էին շլագերներ և դրանք
երգում էր ողջ Խորհրդային Միությունը, բանախոսը մեր
երկրում մշակութային քաղաքականությունն իրականաց-
նող պետական այրերին խնդրեց «վերջապես հայկական
եստրադային երաժշտությունից դուրս մղել դիլետանտիզ-
մը, հնարավորություն ստեղծել, ստիպել-պարտադրել,
որ հայ երգիչները կատարեն պրոֆեսիոնալ կոմպոզի-
տորների բարձրարժեք երգերն ու, վերջապես, դադա-
րեցնել ժողովրդի ճաշակի սրընթաց անկման խթանումը,
հայկական կինոարտադրության մեջ ներգրավել պրոֆե-
սիոնալ կոմպոզիտորներին, ֆիլմերում ու սերիալներում
օգտագործել նրանց գրած երաժշտությունը»:

Ա.Բաբաջանյանի դաշնամուրային տրիոյում ազգային և համաեվրոպական երկուքների սինթեզին էր նվիրված Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, արվեստագիտության դոկտոր Կարինե Ջաղացապետյանի զեկուզումը: Չեկուցող բացահայտեց այդ զուգորդումների օրգանական և համոզիչ դրսևորումները Ա.Բաբաջանյանի երաժշտության մեջ:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, արվեստագիտության թեկնածու Ժաննա Ջուրաբյանի ղեկուցումը նվիրված էր «Գարուն ա» երգի երկու ստեղծագործական վերակերպավորումներին: Բանաստեղծ համեմատական դիտարկմամբ վեր հա-

Նեց ժողովրդական «Գարուն ա» երգի հատվածային մեջբերման ընդհանրությունները եղվարդ Միրզոյանի լարային կվարտետում և Առնո Բաբաջանյանի դաշնամուրային տրիոյում, որոնք, ստեղծված լինելով 1940-50-ականներին, մոր հետաքրքրություն առաջացրին «Գարուն ա»-ի հանդեպ հայ կոմպոզիտորների կողմից և հիմնավորեցին այդ երգի հուզական-կերպարային ընկալումն ու վերիմաստավորումը՝ որպես հայ ժողովրդի պատմական ճակատագրի հետ կապված երաժշտական սիմվոլիկ նյութ:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, արվեստագիտության թեկնածու, կոմպոզիտոր Միխայիլ Կոկժանը տվեց Ա.Քաբաջանյանի Զուլթակի կոնցերտի առաջին մասի երաժշտական ձևի բաժինների տարածական-ժամանակային հարաբերակցությունների կերպարային վերլուծությունը:

Նստաշրջանի առաջին նիստը եզրափակեց Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դասախոս, արվեստագիտության թեկնածու Տաթևիկ Շախլույանի «Ս.Բաբաջանյանի դրոշկաֆոնիկ ստեղծագործությունների շուրջ» զեկուլոնդը:

Նստաշրջանի երկրորդ նիստն սկսվեց Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դոցենտ, արվեստագիտության թեկնածու Վալենտին Թովմասյանի «Ա.Բաբաջանյանը և Հայկական հնգյակը» բանախոսությամբ:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ղոցեմտ, արվեստագիտության թեկնածու Լիլիթ Եփրեմյանի «Չենրիխ Լիտինսկու դասարանում» զեկուցումը վերաբերում էր մեզանում քիչ արծարծվող թեմային, այն է՝ Սոսկվայում Չայաստանի կուլտուրայի տանը հայ կոմպոզիտորների, այդ թվում Ա.Բաբաջանյանի վերապատրաստվելու տարիներին կոմպոզիցիայի դասարանի ղեկավար Չենրիխ Լիտինսկու մեթոդաբանությանը ընդգծված հակախաչատրյանական ուղղվածությանը:

Խ.Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի դասախոս, արվեստագիտության թեկնածու Սաթենիկ Մելիքյանը «Ա.Բաբաջանյանը հայ ծաղրանկարիչների աչքերով» զեկուցման մեջ անդրադարձավ Սերգեյ Արուտչյանի, Գեորգի Յարալյանի և Վարդան Աճեմյանի ընկերական շարժերին, որտեղ յուրաքանչյուրն իր նկարելաոճին համապատասխան պատկերել է մեծանուն կոմպոզիտորին:

Այժմ Երևանի քաղաքապետարանի աշխատակից
Շուշան Դյուրանյանը անդրադարձավ Ա.Բաբաջանյանի
ղայնամուրային պոեմին:

ՀՀ ԳԱՍ Արվեստի ինստիտուտի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Արսեն Համբարձումովի գեկուցումը նվիրված էր կինոստեղծագործության հորինվածքում Ա.Բաբաջանյանի երաժշտության դերին:

Ամփոփելով գիտաժողովի արդյունքները, ԱճՆԱ Աստուրյանը կարևորեց զեկուցումների բովանդակությունը, նշելով, որ տարբեր տեսանկյուններից անդրադառնալով Ա.Բաբաջանյան-ստեղծագործողին՝ բանախոսները ներկայացրեցին կոմպոզիտորի երաժշտական հարուստ ժառանգությունը:

ԻՆԵՍՏԱ ԱՎԱԳԻՄՈՎԱ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի
կրտսեր գիտաշխատող

ՍՓՅՈՒՌԱԿԱՅ ԿՐԿԵՍԱԳԵՏՆԵՐ

ԱՐՓԻԱՐ ՎԱՐԴՅԱՆ

ԿԱՏԱԿԵՐԳԱԿ ԴԵՐԱՍԱՆՆ ՈՒ ԲԵՄԱԴՐԻՉԸ

«Եգիպտոսահայ գաղութի Չարլի Չապլին»։ զվարճացնող արվեստի այս վարպետին համեմատելով կինոյի համաշխարհային հռչակ ունեցող կատակերգակ դերասանի հետ, «Արաքս» թերթն ավելացնում է. «Տարակույս չկա թե հարուստ ազգի մը զավակն եղած ըլլար և մեծցած ու սնած եվրոպական կամ ամերիկյան միջավայրի մը մեջ, շուտով ծանոթ դեմք մը կըլլար թատերական կամ շարժանկարի աշխարհին մեջ»։

Արփիար վարդյանը (1898-1978) ծնվել է Կոստանդնուպոլսում, մախնական կրթությունն ստացել Գում-Գափուի վարժարանում: Պատանեկան տարիներին, հոր արգելքներին հակառակ, մասնակցել է Մարտիրոս Մնակյանի և Սերովբե Պենկլյանի ներկայացումներին: Զգտելով ինքնուրույն բեմադրությունների, մա, Կ. Խաչիկյանի, Ա. Գմբեթյանի և այլ համախոհ-դերասանների ուժերով, ստեղծում է «Պոլսահայ Արևելյան թատերախումբը»։ Իայ առաջին պրոֆեսիոնալ՝ «Արևելյան թատրոնին» համահունչ, որի կազմում հանդես են եկել Մարտիրոս Մնակյանն ու Սերովբե Պենկլյանը: Անդրանիկ ներկա-

յացումն այս խմբում եղավ Երվանդ Թուլայանի և Գրեմ-Սիմոնի «Curl, scout կամ Բարձրացի՛ր, բարձրացո՛ւր» կատակերգությունը, Է. Պինենեմեյանի և այլ դերասանների մասնակցությամբ:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո, ի թիվս Կոստանդնուպոլսի այլ մտավորականների, Արփիար Վարդյանը հաստատվելով Եգիպտոսում, ներգրավվում է տեղի թատերական ասպարեզ։ Այստեղ էլ, թիֆլիսահայ երաժշտական և թատերական գործիչ Գերասիմ Արիստակյանի «Հայ դրամատերետային» խմբի կազմում, Վարդյանը ծանոթանում է ժամանակակի առեւտրային երաժշտական թատրոնի առավել տարածում գտած գործերին։ Արիստակյանի ղեկավարությամբ է, որ Արփիար Վարդյանն ստեղծեց իր հաջողված դերերից մեկը՝ Վալիի (Ուզեիր Հաջիրեկով՝ «Արշին մալ ալան», 1925), կենսուրախ ու տպավորիչ կերպարը։ Մի դեր, որը տարիներ շարունակ դարձավ նրա ստեղծագործական կյանքի մշտական ուղեկիցը։ Կարճ ժամանակ անց՝ 1926-ին, Վարդյանն օպերետի իր իսկ բեմադրությամբ, արժանանում է «Արև» թերթի ծառայության։



Կարողյանի ղեկավարած «Եգիպտահայ կոմեդին» ստեղծվելը 1924-ին, համայնքում գործող «Արուվյան-Սանամյան» (խումբը, ի պատիվ հիմնադիրների, կոչվել է թիֆլիսահայ դերասաններ Բարսեղ Արուվյանի և Մաթևոս Սանամյանի անունով) թատերախմբի ուժերով, շարունակելով մեկ դրա երգիծական ուղղվածությունը: Մամուլի առաջին իսկ արծազանքներով, «Կոմեդին» ներակայացավ որպես կազմավորված և իր գործունեության մասին հստակ պատկերացումներ ունեցող թատերական մի նոր համակարգ: Առաջատար դերասաններ Արփիար Վարդյանը, Աստղիկ Եգեմյանը (Վարդյան) և Ողջա Յովհաննիսյանն արդեն իսկ բնութագրվեցին որպես «հանրածանոթ երրորդույուն»: Խաղացանկը կազմվեց հետևելով պոլսահայ երաժշտական թատերախմբերի սկզբունքին՝ հիմնականում բեմադրելով ֆրանսիական կատակերգություններ, ինչպես մեկ հայ հեղինակների և տեղայնացված գործեր (Մորիս Զենըքեն՝ «Պեպեք», Ռաուլ թոշե և Էմեստ Պլեմո՝ «Տիկին Մոնկոտեն», Մորիս Օրտոնո և Թոմաս Բրանդոն՝ «Չարլիի կեղծ կնքամայրը», Գրենի-Ալիմոն՝ «Հարս ու կեսուր կամ Լիլիարիկի աղետը» և այլ գործեր): Խմբի խաղաոճը մույնպես կազմավորվեց ըստ այդ տարիներին եվրոպական բեմերում ընդունված սկզբունքների:

(շարունակելի)

Անահիտ ՉԹՅԱՆ

արվեստագիտության թեկնածու

ԼԵՊԵՆԴԱՐ ԳԵՆԵՐԱԼԸ

(Վալերիան Մադաթովի դիմանկարի ուրվագծեր)

Նրա արիության, քաջության և խիզախության մասին լեգենդներ էին պատմում, երգեր հյուսում: Իր ոչ երկարատև կյանքի ընթացքում հասցրել է այնքան բան անել, որ դժվար է հավատալ: Լողում էր փառքի մեջ, մեծ էր նրա համբավը: Հայ իշխան էր և ռուսական բանակի գեներալ-լեյտենանտ, 1812 թ. Հայրենական, ռուս-թուրքական, ռուս-պարսկական պատերազմների հերոս, ամենանշանավոր շատ շքանշանների ասպետ, պարգևատրվել է ոսկե թրով և ավմաստակուռ երկու ոսկե թրերով...

Այս ամենը բաժին էր ընկել զարմանալի ծակատագրի տեր մի մարդու՝ կոչումով գինավոր Վալերիան Մադաթովին: Նա սերում էր դարաբաղյան մեծ լիքներից, իսկական անունը Ռոստոմ էր: Ծնվել է 1782 թ. Շուշիից ոչ հեռու գտնվող Չանախչի (Ավետարանոց) գյուղում: Հայտնի կովկասագետ Վեյդենբաումի համոզմամբ՝ իշխան Մադաթովի իսկական ազգանունը Գրիգորյան է: Մենք պաշտպանում ենք գիտնականի տեսակետը, թեև Մադաթովի ծագման շուրջ վեճերը շարունակվում են առ այսօր, և միասնական կարծիք այդ հարցում չկա: Անվանի գինավորականի հայրը Վարանդայի մելիքի ծխապան էր: Ինչպես է Ռոստոմ Գրիգորյանը Վալերիան Մադաթով դառնում: Ռուսական գվարդիա ընդունվելուց անմիջապես հետո նա վերցնում է մոր ազգանունը: Նշենք, որ մեկ այլ տարբերակի համաձայն, որը պաշտպանում էր մինչև հեղափոխական պատմագրությունը, գեներալ Մադաթովը սերում էր իշխանական տիտղոս ունեցող հայ ազնվականական ընտանիքից: Այս տարբերակը ևս տրամաբանություն ունի, քանի որ ռուսական կայսր Պավել 1-ը հատուկ հրաման էր արձակել, որով խստորեն արգելվում էր սպայական կոչում շնորհել ազնվական ծագում չունեցողներին: Ավելացնենք նաև, որ մեկ այլ տարբերակի համաձայն էլ իշխանական տիտղոսը դեռևս բոլորովին պատանի Ռոստոմ Մադաթյանին շնորհել է ինքը՝ կայսրը, գվարդիական կորպուս ընդունվելիս:

1799 թ. հայ մելիքների պատվիրակությունը Ղարաբաղից գալիս է Պետերբուրգ՝ քրիստոնյա Ռուսաստանից պաշտպանություն խնդրելու մահմեդական քոչվոր ցեղերի անընդմեջ ասպատակություններից: Պատվիրակության կազմում էր նաև թխահեր, արծվաքիթ ու խորաթափանց հայացքով 17-ամյա մի պատանի՝ իսկական լեռնական կովկասցի: Ռոստոմ Մադաթովն էր: Տեսնելով կայսերական գվարդիական զնդերի ցուցադրական վարժանքները՝ պատանին ինքն էլ մասնակցեց դրանց և հանկարծ իր համար պարզեց, որ դա հենց այն է, ինչ իրեն պետք է, որ իր կոչումը գինավորական լինելն է: Ռուսական բանակ և ռուսական զենք, ահա թե ինչը պետք

է հակադրել թուրք-թաթարական քոչվոր հորդաներին: Ռուսների և հայերի՝ հոգեհարազատ քրիստոնյա այդ երկու ժողովուրդների շահերը համընկնում էին, նրանք ընդհանուր թշնամի ունեին, և նպատակները նույնպես ընդհանուր էին: Այդ ժամանակ պատանի Ռոստոմը գինավորական ծառայության անցնելու խնդրագիր ներկայացրեց: Ստանալով հայ հավատակիցներին համակողմանի աջակցելու Ռուսաստանի խոստումը՝ Ղարաբաղի մելիքների դիվանագիտական առաքելությունը բռնեց տունդարձի ճամփան: Իր ազնվագարմ հայրենակիցների հետ հայկական Ղարաբաղ վերադարձավ նաև Ռոստոմը:



Շուտով Պավել I կայսրը հիշեց թխահեր, վայելչակազմ հայ պատանուն, որը հաճելի տպավորություն էր թողել նրա վրա: Իմանալով Մադաթովի խնդրագրի մասին՝ ռուս գահակալը հրամայեց շտապ գտնել և Պետերբուրգ հասցնել պատանուն: Այսպես Մադաթովը հայտնվեց

ռուսական պետության մայրաքաղաքում և անմիջապես էլ ձեռք բերեց արքայիսկուպոս Գովսեփ Արղության-երկայնաբազուկի և Գովհանես Լազարյանի հովանավորությունը: Նա մտերմացավ նաև հայկական սփյուռքի նշանավոր շատ այլ ներկայացուցիչների հետ:

Չինվորականի կարիերան Մադաթովն սկսեց ամենացածր աստիճանից՝ դառնալով Պրեդերաժենյան զնդի լեյք-գվարդիայի փոխսպա: Նա սրընթաց վեր է բարձրանում աստիճանակարգով, ստանում մոր նշանակումներ և աստիճաններ, ընդ որում՝ շնորհիվ միայն անձնական գործնական որակների, խելքի, քաջության ու արիության: 1808 թ. արդեն կապիտանի աստիճան ուներ և ծառայում էր Մինգրելական հետևակային զնդում:

Նույն թվականին 26-ամյա կապիտան Մադաթովը գեներալ Բագրատիոնի բանակում մասնակցում է ռուս-թուրքական պատերազմին: Այդ ճակատամարտերում դրսևորվում է երիտասարդ ռազմիկի խիզախությունը: Նա միշտ առջևում էր, սխրամքներ էր գործում, որոնց մասին հայտնի է դառնում գինավորական բարձրագույն հրամանատարությանը: Մի անգամ նրան հաջողվում է երկու ոչ մեծ էսկադրոնով գրոհել և փախուստի մատնել թուրքական չորսհազարանոց հեծելազորը: Նրա

գրոհին հետևող գեներալ Բագրատիոնն այնքան ցնցված էր, որ անընդհատ կրկնում էր. «Սա արդեն պարզապես անհավանական է»: Հենց այդ մարտի համար է Մադաթովին շնորհվել «Արիության համար» մականորոշանք ոսկե թուրք: Այդ ժամանակ արդեն մի քանի կարևոր հաղթական ճակատամարտեր էր մղել և մի քանի բարձրակարգ շքանշաններ ուներ:

Մարտական սխրամքները Վալերիան Մադաթովը, արդեն ռոտմիստրի կոչումով, շարունակում է Ալեքսանդրյան ռուսարական զնդում, ուր ուղարկվել էր 1810 թ.: Շուտով առանձնապես աչքի ընկնելու համար նրան շնորհվում է մայորի աստիճան: Նրա էսկադրոնները թուրքական բանակի ահուսարսափն էին: Մի քանի անգամ նա հարձակվում է թշնամու բազմահազարանոց շարասյուների վրա և աներևակայելի հաղթանակներ տանում:

1812 թ. Հայրենական պատերազմի ընթացքում իշխան Մադաթովը, արդեն որպես փոխգնդապետ, մասնակցում է մի քանի ճակատամարտերի, սակայն ամենագլխավոր՝ Բորոդինոյի ճակատամարտին նրան և իր Ալեքսանդրյան զնդին բախտ չի վիճակվում մասնակցել: ճակատամարտերում ցուցաբերած հերոսության և խիզախության համար նրան շնորհվում է գնդապետի կոչում և Գեորգիևյան խաչ: Նշենք, որ ռուսական բանակում նա միակ գնդապետն էր, որ այդքան բարձրակարգ շքանշաններ և ադամանդակուռ ոսկե թուր ուներ:

1819 թվականից սկսվում է իշխան Վալերիան Մադաթովի մարտական փառապանծ գործունեությունը Կովկասում, ուր նա վերադառնում է Շիրվանի, Նուխիի և Ղարաբաղի խանության կառավարչի կարգավիճակով: Այստեղ մնում է 11 տարի՝ դառնալով գեներալ-երմուլովի աջ ձեռքը:

Մադաթովի կենսագրության մի նոր էջ է բացում 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմը: Ելիզավետպոլի (Գանձակի) վճռորոշ ճակատամարտում Մադաթովը մարտնչում է առաջին գծում և ապահովում ռուսական բանակի հաղթանակը: Այդ հաղթանակի համար գլխավոր հրամանատար Ի. Պասկևիչը Մադաթովին ներկայացնում է գեներալ-լեյտենանտի կոչման:

1828 թ. գարնանը գեներալ Մադաթովը տեղափոխվում է Բալկաններ, ուր գլխավորում է ռուսարական դիվիզիան և մասնակցում ռուս-թուրքական պատերազմին: 1829 թ. սեպտեմբերի 2-ին Թուրքիան, որ Ադրիանապոլսի մոտ ջախջախիչ պարտություն էր կրել, հաշտության պայմանագիր է կնքում: Եվս երկու օր անց՝ սեպտեմբերի 4-ին, փառապանծ գեներալին «տապալում» է թրքերի հին հիվանդությունը՝ թոքախտը, որն այն տարիներին անբուժելի էր:

Ռուսական գահակալ Նիկոլայ 1-ի կարգադրությամբ, գեներալ Մադաթովի աճյունը տեղափոխվում է Ռուսաստան և հողին հանձնվում Պետերբուրգում:

Գուրգեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Մեր ռադիստները աշխարհի եռակի չեմպիոն

Ահա արդեն որերորդ անգամ հայ ռադիստները լավագույնն են ճանաչվում աշխարհում: Ավանդույթը չխախտվեց նաև այս անգամ:

Այս մրցումները անց են կացվում մոլորակի ռադիոսիրողների միջազգային ընկերության հովանու ներքո: Վերջին առաջնությանը մասնակցում էին աշխարհի 150 երկրների ավելի քան 250 հազար ռադիոսիրողներ: Մասնակիցներից պահանջվում է մեկ օրվա ընթացքում հնարավորինս շատ կապ հաստատել աշխարհի տարբեր երկրների ռադիոսիրողների հետ: Հաղթում է այն թիմը, որ առավելագույն «միավորներ» է հավաքում կապվելու քանակով:

Միջազգային ժյուրիին 2 ամիս պետք է եղավ հաշվելու բոլոր մասնակիցների արդյունքները:

Եվ, ինչպես նշեցինք, աշխարհի չեմպիոն հռչակվեց Հայաստանի ԴՕՍԱԱՀ-ի թիմը: Հաղթող թիմի անդամներից մեկին՝ ԴՕՍԱԱՀ-ի ռազմահայրենասիրական բաժնի պետ Սամվել Խաչատրյանին խնդրեցինք պատմել մեր թիմի մասին:

- Մեր թիմը բաղկացած էր 7 հոգուց:



Հայաստանի ռադիոսպորտի ֆեդերացիայի նախագահ Գեորգի Բադալյանից բացի նրանում ընդգրկված էին Արամ Մանվելյանը, Լևոն Հարությունյանը, Կարեն Կարապետյանը, Գովհն Բաղդասարյանը և Արմեն Մելյանը:

Մենք վրանները, ռադիոկայանները և

անհրաժեշտ տեխնիկան տեղադրել էինք Օրգով գյուղի մերձակա դաշտում: Օրգովը գտնվում է Բյուրակյանի մոտ, Արագած լեռան հարավային լանջին:

Տեղը որոշել էինք մենք, որովհետև այն իր աշխարհագրական դիրքով հնարավորություն է տալիս կապ հաստատել

մոլորակի ցանկացած կետի հետ: Մեր ռադիստները կարողացան իրականացնել ավելի քան 1000 ռադիոկապ՝ զգալիորեն առաջ անցնելով Ռուսաստանի Դաշնության թիմերից:

Ավելի ուշ կայացավ ռադիոկապի աշխարհի առաջնությունը՝ միկրոֆոնային ռեժիմով: Քանի որ այստեղ մորգելի այբուբենի իմացության կարիքը չկար, թիմերի քանակը հասավ 170-ի: Եղանակային պայմանները չափազանց բարդ էին՝ տեղատարափ անձրև, ամպրոպ, քամի: Մեր ռադիստներին միացել էին նաև Արմեն Սարոյանը, Արման Բաբոյանը և Արմեն Աղաջանյանը: Մենք մորից առաջինն էինք:

Օգտվելով առթից ուզում ենք թիմի անունից շնորհակալություն հայտնել Հայաստանի ԴՕՍԱԱՀ-ի նախագահ Արկադի Տեր-Թադևոսյանին և նրա տեղակալ Աշոտ Խաչատրյանին: Նշենք նաև, որ արդեն երկրորդ տարին մենք օգտագործում ենք նորագույն ռադիոտեխնիկա, որը մեզ նվիրել է «ՎիվաՍԵլ» ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը:

ՖԵԼԻՔՍ ԼԵՎՈՆՅԱՆ



Կյանքի 82-րդ տարում վախճանվեց Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հնագույն և վաստակաշատ աշխատողներից մեկը՝ Ֆելիքս Հայկի Լևոնյանը: Ֆ. Լևոնյանը ծնվել է 1930 թվականին, ծառայողի ընտանիքում: 1950 թվականին ավարտել է Երևանի Ա.Մոսկովյանի անվան թիվ 25 միջնակարգ դպրոցը: 1951 թվականին զորակոչվել է խորհրդային բանակ, ծառայել նավատորմում: 1954 թ. ավագ նավաստի Ֆ. Լևոնյանը վերադառնում է տուն և մինչև 1960 թվականն աշխատում է ՀԽՍՀ գյուղատնտեսության տարբեր կառույցներում:

1960 թվականից Ֆ. Լևոնյանը իր ճակատագիրը կապում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի հետ՝ կադրերի և ասպիրանտուրայի բաժնի տեսուչ, ԳԱ նախագահության ռեֆերենտ (խորհրդական), Բնության պահպանության խորհրդի քարտուղար: Աշխատանքին զուգընթաց, 1968 թվականին ավարտում է Երևանի գյուղատնտեսության ինստիտուտի խաղողագործության և բանջարաբուծության ֆակուլտետը:

ՀՀ ԳԱԱ նախագահություն
ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն

1969 թվականին Ֆ. Լևոնյանը նշանակվում է ՀՀ գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրայի բաժնի վարիչ, վերջին տարիներին՝ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի ասպիրանտուրայի բաժնի վարիչ: Այդ պաշտոնում նա մնաց մինչև կյանքի վերջին օրը: Նրան բախտ վիճակվեց աշխատելու աշխարհահռչակ Վիկտոր Համբարձումյանի անմիջական ղեկավարությամբ, քանզի ասպիրանտական կադրերի ընտրությանը ԳԱ նախագահը վերաբերվում էր մեծագույն խստությամբ և բժախնդրությամբ: Նույն վերաբերմունքը պահանջվում էր Ֆելիքս Լևոնյանից: Եվ, ի պատիվ նրա, նա զարմանալի պատասխանատվությամբ էր վերաբերվում մի կառույցի, որը Հայաստանի գիտական ապագա ներուժի դարբնոցն էր: Ամբողջ 43 տարի Ֆելիքս Լևոնյանը ընտրում, ընդունում և պատրաստում էր ապագա ասպիրանտների գործերը՝ զարմանալի բարյացակամությամբ և բարեխղճությամբ: Այսօր համրապետության հարյուրավոր գիտության դոկտորներ, գիտության թեկնածուներ հաջողության առաջին մղձաքնը ստացել են Ֆ. Լևոնյանի շուրթերից:

Ֆ. Լևոնյանին բնորոշ էր անսահման աշխատասիրությունը, պատասխանատվությունը ու նվիրվածությունը իր գործին: Նա հրաշալի անձնավորություն էր, պետական ծառայողի տիպար, լավ ամուսին էր, սիրող հայր և պապիկ, փնտրված գործընկեր և պարզապես մարդ:

Ֆելիքս Լևոնյանի հիշատակը երկար կապի Հայաստանի հարյուրավոր գիտնականների, իր գործընկերների և բոլոր ճանաչողների սրտերում:

Մեր անկեղծ ցավակցությունը Ֆելիքս Լևոնյանի ընտանիքին՝ ծանր և անսփոփ կորստի կապակցությամբ:

ԱՅԼԱԶԱՆ

Քաղցկեղի պատճառը ինքնաներշնչումն է

Ամերիկացի մի խումբ գիտնականներ հաստատում են այն կարծիքը, որ բազմաթիվ ծանր հիվանդությունների պատճառը պետք է փնտրել մարդու հոգեբանության մեջ: Հյուսիսում անցկացված հետազոտությունների ընթացքում ապացուցվել է դեպրեսիայի (ընկճվածության) և տևական սթրեսի կապը ուռուցքային հիվանդությունների հետ: Այդ մասին հաղորդում է podrobnosti.ua կայքը:

Գիտնականները նշում են, որ դեպրեսիայի վիճակում արյան մեջ բարձրանում է պրոտեինի մակարդակը, իսկ հաճախ հենց պրոտեինն է արագացնում քաղցկեղային բջիջների զարգացումը և նպաստում է մետաստազների աճին:

Երկարատև սթրեսի ու դեպրեսիայի դեպքում օրգանիզմում առաջանում է նորեպինեֆրին: Այդ նյութն արագացնում է չարորակ ուռուցքով արդեն վարակված բջիջների աճն ու բազմացումը:

Գիտնականները խորհուրդ են տալիս ավելի քիչ մտածել ծանր հիվանդությունների մասին և ուրախություններ գտնել կյանքում:

2030-ին գերերը կկազմեն ԱՄՆ բնակչության 42 տոկոսը

Եթե ներկայիս միտումները պահպանվեն, ապա 2030 թվականին ԱՄՆ-ում գերերը կկազմեն բնակչության 42 տոկոսը: Այս հետևությանը է հանգել Դյուկի համալսարանի պրոֆեսոր Էրիկ Ֆինկելշտեյնը առկա իրադրության վերլուծության հիման վրա: Գիտնականը հաշվարկել է, որ ճարպակալումից տառապող մարդկանց թիվը ԱՄՆ-ում աճում է աներևակայելի տեմպերով և կարող է իսկական աղետ դառնալ երկրի տնտեսության համար: Նկատի ունենալով կառավարության և հենց քաղաքացիների հնարավոր ծախսերը, առաջիկա 20 տարում ճարպակալման բուժումը երկրում կարող է արժենալ մինչև 550 միլիարդ դոլար:

Վերջին հետազոտությունները ցույց են տալիս, որ այժմ ԱՄՆ-ում չափահաս բնակչության 2/3-ը արդեն ունի ավելորդ քաշ: Ըստ որում, նրանց 1/3-ը անմիջականորեն տառապում է ճարպակալումից: Ինչ վերաբերում է գիրության հատկապես ծանր ձևերին, այն է՝ լուրջ ճարպակալմանը, մինչև 2030 թվականը դրանից տառապողների բաժինը կարող է կրկնապատկվել: Գիրությունը առաջացնում է մի շարք հիվանդություններ, որոնցից են շաքարախտը և սրտային հիվանդությունները:

Մի շարք փորձագետներ կանխատեսել էին, որ 2030-ին ճարպակալումից կտառապի ԱՄՆ բնակչության ավելի քան 50 տոկոսը: Այս հարցը լրջորեն հուզում է քաղաքական գործիչներին և նրանց ընտանիքների անդամներին: Մասնավորապես ԱՄՆ առաջին տիկին Միշել Օբաման զանազան բարեգործական միջոցառումներ է անցկացնում երեխաների ճարպակալման դեմ պայքարելու նպատակով:



Ռուսաստանում փորձարկվում է «ցավոյ հրանոթ»

Նախընտրական իր վերջին հոգվածներից մեկում Վլադիմիր Պուտինը ասել էր, որ ապագայի հեռանկարում զինված պայքարում վճռական նշանակություն են ունենալու ֆիզիկական նոր սկզբունքներով ստեղծված զենքի տեսակները (ճառագայթային, երկրաֆիզիկական, ալիքային, զենային, հոգեֆիզիկական): Դրանից քիչ ժամանակ անց ՌԴ պաշտպանության նախարար Անատոլի Սերդյուկովը հայտարարեց, թե իրենք պատրաստ են ստեղծելու նման զենքի տեսակ:

Այստեղ նա փոքր-ինչ խորամանկեց, քանի որ ռուսական զինական գիտնականները, ամերիկացիների նման, ինչ-որ բան արդեն ստեղծել են: Ինչպես, օրինակ, «ցավոտ» ճառագայթը: Ոչ մահացու զենքը, որը մարդու մեջ առաջացնում է այրվելու զգացողություն:

Փորձարկումները իրականացնում են ՌԴ պաշտպանության նախարարության 12-րդ կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի աշխատակիցները: Ինչպես նշում է ԿԳՀ բաժնի վարիչ Դիմիտրի Սոսկովը, որպես խոցող միջոց օգտագործվում է էլեկտրամագնիսական կարճալիք ճառագայթումը: Էլեկտրամագնիսական «հրանոթի» ճառագայթի հզոր փունջը 2-3 վայրկյանի ընթացքում մարդու մեջ առաջացնում է այրման սաստիկ զգացողություն և ցանկություն՝ ակնթարթի արագությամբ թաքնվել այդ ջերմային պատուհասից:

Ի դեպ, փորձարկումները ցույց տվեցին, որ «ցավոտ» հրանոթը գործողության ժամանակ չի վնասում մարդու ոչ հագուստը, ոչ ներքին օրգանները, ոչ էլ ոսկորները: Նման հրանոթի «կրակի» հեռավորությունը 300 մետր է (այլ տվյալներով՝ մինչև 500 մ): Ըստ որում կարճ համախոսության այդ ճառագայթումը անհնար է պատնեշել ոչ ծխածակությամբ և ոչ փոշու ամպով: Պաշտպանության նախարարության 12-րդ կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտում գտնում են, որ այս զենքը կարող է արդյունավետ գործել ռազմական լուրջ բախումների ժամանակ. «տապակված» թշնամին պետք է զլուխն առնի և փախչի գրողի ծոցը:

Մեկ տարբերակ ևս. «հրանոթը» և նրա «այրող» կրակահերթը կարելի է օգտագործել քաղաքներում զանգվածային անկարգությունների զսպման համար: Ի դեպ, հրանոթը կարող է կրակել անգամ անկյունից՝ հայելային անդրադարձման օգնությամբ: Պետք է նշել, որ Միացյալ Նահանգներում նույնպես փորձարկում են նման զենք: Միայն թե թաքնված անկյունից կրակելու հնարավորությանը ամերիկացիները դեռ չեն հասել:

Վիկտոր ԲԱՐԱՆԵՑ

«Կ. Ս.»

ԺՊԻՏՆԵՐ

Շոտլանդացի գրուցում է հարևանի հետ.

- Պատկերացրու, երեկ գնացել էի կինո և հանկարծ հրդեհ բռնկվեց:

- Հետո", հետո", - հետաքրքրվեց հարևանը:

- Ամեն ինչ հրաշալի վերջացավ: Մեզ վերադարձրին տոմսերի գումարները:

ԲԺԻՇԿ- Իմ բժշկական գործունեության ընթացքում ես ընդամենը մեկ անգամ եմ սխալ թույլ տվել:

- Եվ ի՞նչ սխալ:

- Երկու այցի ընթացքում ես լիովին բուժեցի հիվանդին, իսկ հետո իմացա, որ նա միլիոնատեր է:

Խորտակվող նավի կապիտանը դիմում է անձնակազմին.

- Չեզոք ուրեմն մեկը գիտե՞՞ աղոթել:

- Ես գիտեմ, պարոն կապիտան:

- Հրաշալի է: Ուրեմն սկսեք աղոթել, իսկ մյուսներին հրամայում եմ հագնել փրկարար բաճկոնները: Բոլորիս համար հենց մի փրկարար բաճկոն է պակասում:

- Ասացեք, խնդրեմ, դուք դեռ ոչ մեկին չեք կարդացել ձեր պոեմը:

- Ոչ, առաջինը դուք լսեցիք:

- Հապա ինչո՞ւ է ձեր աչքը կապտած:

Ջրբաժանի մոտ համդիպում են երկու ծուկ. մեկը՝ մեծ, մյուսը՝ փոքր: Որոշ ժամանակ նրանք զննում էին իրար, մինչև մեծը չխոսեց.

- Մեծ ձկները փոքրերին ուտում են:

- Դուք իրավացի եք, բայց որտեղի՞ց ճարենք այդ փոքրիկ ձկներին:

Մեծ ձուկը շփոթվեց փոքրիկի կտրիությունից և հեռացավ:

ԽՐԱՍ. Լկտիությունը երկրորդ երջանկությունն է:

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24ր, հեռ. 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:

Ստորագրված է փապգրության՝ 23. 05. 2012 թ.: Տպաքանակը՝ 500:

"ГИТУТОН" ("Hayka") газета НАН РА